

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Վարդի Քշիշեան, *Հայկի Հայկական Գաղթականի Հասարակական-Մշակութային Կազմակերպություններ (1846-1915)*, Գեորգ Մեխակենցի Գրական Մրցանակի հրատարակչություն, Ամբիօյա, 2001, 280 էջ:

Հայ եւ օտար մասնագիտական գրականության մեջ, շատ քան գրուած է հայկական մայր գաղթականի պատմութեան մասին: Առկայ են հարիւրաւոր յօդուածներ, ուսումնասիրութիւններ, յոշակոյթիւններ, առանձին հարցերու նուիրուած միակողմնական, մամուլի էջերուն գրուած քննադատութիւններ, ճանապարհորդական գրատուճիւր:

Առանձնապէս պէտք է յիշել անհնգմէ երկուցը՝ Արտուսազ Արք. Սիւրճեանի *Պատմութիւն Հայկի Հայոց (Զննական) 1355-1908* գիրքին Գ. հատորը (Փարիզ, 1950, 996 էջ) եւ Յովհաննէս (Օճնիկ) Թովմազեանի *Միջնադարի Հայկական Գաղթականութեան Պատմութիւն (1841-1946)* (Երեւան, 1986, 372 էջ) գիրքերը: Յիշեալներն առաջինը երէ խոցելի է ինչ-ինչ կողմերով ու չի դիմանար խիստ քննադատութեան, ապա երկուորը որքան ալ պատրաստուած ըլլայ գիտական բարեխղճութեամբ, կ'ընդգրկէ նեղ ժամանակաշրջան մը միայն. եւ չ'որոտագծեր գաղութին ամբողջական պատմութիւնը: Այնպէս որ, գաղութի պատմութեան առնչուող բազմաթիւ կարեւոր հարցեր ու երեւոյթներ հայ պատմագրութեան կողմէ տակաւին հարկ եղած լուստարանման չեն արժանագած ու կը սպասեն իրենց պատմաբանին:

Այս ուղղութեամբ կատարուած կարեւոր իրագործում մը եղաւ վերջեւս հրատարակուած գրախօսուող հատորը, որ եկաւ միանալով Սիւրճեանի ու Թովմազեանի գործերուն ու զգալի քաղ մը զոցեց գաղթականի պատմութեան նուիրուած առկայ գրականութեան մեջ:

Հեղինակը՝ Վարդի Քշիշեան, բնիկ երեւանցի, ստարուած է Երեւանի Պետական Համալսարանի բանասիրութեան միջոց Մագիստրոս Արտուսից տիւրուաով, եւ առիկ քան տասնամեակէ մը ի վեր Հայկի հաստատուելով հայկական էին գաղութին մշակութային կեանքը ընտրած է իրեն որպէս հետաքրքրութեան ծիր, այդ ուղղութեամբ սփիւռքահայ ու հայրենի մամուլին մէջ լայն ընձայնելով բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ:

Գաղութի պատմութեան նուիրուած առաջին գործը չէ Քշիշեանի այս հատորը, բայց այն իր բովանդակութեամբ եւ մամուլում ընդգրկուելով կա՛յ գոցելու զգալի քաղ մը, ներկայացնելով 1846-1915 ժամանակաշրջանին Հայկի մէջ գործած 48 կազմակերպութիւններու պատմութիւնը, կազմակերպութիւններ որոնք մեծ մասամբ անմասնօրէն գնացած էին ցարդ, ու այս գիրքով է որ առաջին անգամ լոյսին կա՛ գաւ, իրենց հետ բերելով յամուն հայ դպրոցի ու հայրենի օճախի լուստարան գործած տասնեակ մը մայրոց նուիրումն, գոհարիւրութեան ու սխրանքին պատմութիւնը:

Ի սկզբանե ըսեմ, որ Սիւրճեանի նշեալ աշխատասիրութեան մէջ Քէշիշեանի յիշատակած 48 կազմակերպութիւններն խօսուած է միայն երեքին մասին, թուիւզեանի մօտ՝ միայն եօթի, իսկ Հ. Նիքրեմ վրդ. Պօղոսեանի մօտ (Պօղոսեան արտանձին գլուխով չէ ներկայացուած հալւածահայ միութիւնները, այլ՝ կողմնակի՝ գաւառի ընդհանրում ու զիտերում մասին խօսած ժամանակ միայն)՝ իննի՝: Այնպէս որ, եթէ Սիւրճեանի ու թուիւզեանի մօտ եղող կրկնութիւններն ալ ի մտի ունենանք, գրախօսուող հաստորը յոյսին կը բերէ ցարդ թողողվին անմասօթ 31 կազմակերպութիւններ՝ իրենց գործունէութեան զանազան որոտներով՝ ու մամբամասնութիւններով: Պիտի չմոռնայ մասն, որ վերոյիշեալ երեք հեղինակներն ալ նիւթին անորոշարձած են շատ հարեանցի, մինչև իրենց մօտ ընդամենը երեք-չորս տարով ներկայացուող միութիւններ Քէշիշեանի մօտ հրամցուած են քանի մը էջով:

Ներածական մտտերին մէջ հեղինակը ամփոփ տողերով կ'անդրադառնայ իր աշխատանքին տուն տուող որդապատճառներուն, իրաւացիօրէն նշելով թէ «Լազուց արդէն հասունցած է հալւածահայ պատմութեան խիստ ուշագրտ՝ հասարակական, կրթական ու մշակութային կազմակերպութիւնները ուսումնասիրութեան առարկայ դարձնելու խնդիրը, որ պիտի զայ լրացնելու մեծ ու շատ կարեւոր քաջ մը գաղութին անբողբալական պատմութիւնը որտազծելու առումով» (էջ 7):

Քէշիշեանի հաստորը կը բացուի 32 էջերու վրայ երկարող պատմական ընդարձակ ակնարկով մը, որ ձևով մը հալւածահայ էին գաղութին ամփոփ պատմութիւնն է, ու կը մտապատրաստէ ընթերցողը միւթի ընկալումին: Ան կը սկսի գաղութի կազմաւորմամբ ու հնագոյն շրջանի պատմութեամբ, յետոյ կ'անդրադառնայ Կիլիկիոյ կարողիկոսներու ժամանակաշրջանէ Հայէպ հաստատուելու փաստին, գրութեան դարձողի գործունէութեան, արեւատակցական «ժամախորհուններու» համբարութիւններու գոյութեան ու աշխատանքի միջին, արեւելի ու արեւմուտքի միջև տարանջիկ վաճառակաւորութեան մէջ հալւածահայ խոճանկու դերին, Պարոյ հայոց Պատրիարքարանի ու Կիլիկիոյ Կարողիկոսութեանց հետ Հայէպի Առաջնորդարանի յարաբերութիւններուն, 1908ի օստանման օստանաւորութեան հետեանցով տնդծուած մոր իրաւիճակին, հոսով՝ անդրադառնալով նաև գաղութի մշամար մտաւորական դիմբերուն, որտազծելով գրողի ու հասարակական գործիչի ամենց դիմագծերը:

Այս րամբին մէջ յատուկ ուշադրութեան արժանացած են երկու միւթեր, որոնց մասին խօսուած է առատկ մամբամասնութեամբ. առաջինը՝ հայկական գաւառներն ու Կիլիկիայէն արմադուխաներու Հայէպ հոսքն է, իսկ երկրորդը՝ տնդայն Ազգային Նիւտեան Երկստ Կարծարանին գործունէութիւնը: Ձարմանակ ալ չէ այս միւթերուն վրայ ծանրանալու հեղինակին մտադրութիւնը, որովհետև, ինչպէս առիւ հարզին ընթերցումով կը պարզուի, Հայէպ մէջ գործած միութիւնները, ընչ ըստաուրամբ, հիմնուած են կ'ան ստարակու տնդայն ազգային վարժարանին, ու կ'ան ալ հիմնուած են պատմութիւններու կողմէ՝ օգտակար ըլլալու հայրենի գիտին, եկեղեցիին ու դպրոցին: Այնպէս որ

այս երկու միջոցում առանց ծանոթացումը կը նպաստե անի լաւ ընկալիւ
հատորին մէջ ներկայացում փաստերն ու տեղեկութիւնները, եւ կը նպաստե
խտափեկու անտեղի կրկնութիւններ:

Ի՞նչ եղած է յիշեալ ժամանակաշրջանին հայկազնայութեան թիւը: Հեղի-
նակը, մատնանշելով համընդ որ ստոյգ վիճակագրութիւններ կը պակսին,
նկատեցած է առկայ տուեալները, սրտնցնէ կը պարզուի որ հայ առաքելական
համայնքի թիւը 1880ականներու սկզբնադարեան տարւոյնքած է 2000ի
չուցք, Համայնարհային Առաջին Պատերազմի մախօրէին իսանելով 6500ի:
Ու երեսակայել, որ այս փորձաքիտ գաղտնքն է որ տասնամակներու վրայ
ծնանց տուած է զիջքին մէջ յիշուած 48 միութիւններուն:

Արժէ գիտնալ մասն թէ ինչ էր յիշեալ միութեանց անդամներուն թիւը, եւ
բանիմնի մերգրուած են միութեանկան կեանքին: Տրուած բարձրագոյն թի-
ւը եղած է 165, կայ մասն 160 ամրամ տնեցալ միութիւն մը: Մնացեալները ան-
ի համետ են իրենց թիւով, մասնաւոր հայրենակցական խմբաւորումները:

Այս ընդարձակ ակնարկէն ետք կը գայ բուն միւրքը, զոր հեղինակը բաժ-
նած է երեք խմբաւորումներու.- ա) Հալէպ հաստատուած միութիւններ, բ)
հայրենակցական ընկերակցութիւններ, եւ վերջապէս գ) մասնաճիւղեր: Իրա-
բանչիւր բաժնի մէջ միութիւնները ներկայացուած են իրենց հիմնադրման ժա-
մանակագրական կարգով:

Առաջին բաժինը, որ ամենն ընդարձակն է ու կը գրուե զիջքին 145 էջերը,
նուիրուած է, ինչպէս թիւնք, «Հալէպ Հաստատուած Միութիւններուն»: Ներ-
կայացուած են 26 միութիւններ, որոնք գրեթէ առանց բացատրութեան հիմ-
նուած են տեղւոյն կրթական շարժումին միւսն տալու եւ մշակութային կեանքը
աշխարհացնելու նպատակով:

Հալէպի մէջ գործած միութիւններն առաջինը «Ռուբինեան Ընկերութիւն»
ն է, հիմնուած խոնք մը թագաւոր ամենքուս կողմէ, 1846ին: Անոր գլխաւոր
նպատակը եղած է «տաշիրէնց ծաղկեցնել Բերկայի մէջ»: Միութեան հիմնադ-
րութեան խթան հանդիսացած է տեղւոյն բանասէր հայրերն Տէր Գեորգ Տէր
Մարգարեանի շրջան մը Պոլիս գտնուելը, ան տեսնելով տեղւոյն «թարեկարգ-
եալ եւ յուսատրեալ դպրոցներուն յատաջիւնութիւնը», եւ իմանալով բարեկի-
րական-մշակութային միութիւններուն ան տոյր խառցած դրական դերին մա-
թին, նպատուած է նայնթիւնակ միութեան մը հիմնումին: Հալէպի մէջ:

Հնաաբքըրական միութիւններ են Արամեան Խնայողական եւ Առնուորա-
կան Միութիւնները, որոնք կը միտին զարկ տալ կրթական կեանքին եւ
նպատակը երկրաստորներու մասն առնարական դաստիարակութեան: Անոնք
կը միտին «Հալէպի մէջ գտնուող հայազգի խղճալիները մասնակից ընել ժա-
մանակեւ յատաջալիմութեան բարեացը՝ որոնք գլխաւորապէս երկուքի կը
բաժնուին. այսինքն ուսումն եւ վաճառականութիւն» (Եջ 49): Բաժնետիրա-
կան-շահակցական հիմնումներով գործող այս միութիւնները ծրագրած էին
եղանկը վարժարան մը Հալէպի մէջ, եւ արեւտեղ դպրոց մը Կիլիկիայ հայա-
շատ կեդրոններն մէկուն մէջ:

Կարելի չէ առանց շուգումի կարգալ Հալեյ սպաստանած սաստնցի երիտասարդներուն հոգատարութեան համար ստեղծուած «Մասունցի տրեստատարաց մասնատորօփին (1908) նուիրուած գովար: Այլ պատուիրտ երիտասարդները, որոնք քոլորն ալ ամխտիր կ'աշխատէին փոռնիս եւ քաղացքներու մէջ, այնքան վատատոյջ էին ու կիսանդկախ, որ ամենքմտ ամմն տարի հաղին կը յանձնուէին 25-28 մատոյջ գոնիք. հետեւաբար, Ազգային Անայնդոյթարանի ամմիթական հակադրութեամբ հիմնուած այս մասնատորօփմ առաջին ու կարեւորագոյն գործը կ'ըլլայ անոնց յատուկ դարձմանտան եր հիմնուծը:

Այս բաժնին մէջ յիշատակուած միտրիմներուն մէջ քիչ չէ նաեւ քիւր «Կարկեստան» տիկնիմներու կողմէ հիմնուած միտրիմներուն, որոնք ծնունդ առած են տեղւոյն իզական սեփ դատարարակութեան հոգ տանելու նպատակով: Անոնցմտ առանձնապէս սիտի յիշել «Հայտնեաց մատենադարանի խմանակատրօթիմն»ը, հիմնուած 1907ին, որ նպատակ ունեցած է «Բեթիարանակ հայտնեաց քարոյթական կրթութեան եւ մտքի զարգացման դիւրութիմներ րնծայել, անոնց մէջ արթնցնել ընթերցասիրտութեան ոգին եւ միանգամայն վիճակին հայ զիւղորէից մէջ ստրատ ուսանողուհեաց զընճական պիտոյթն հոգար» (էջ 103): Իր գոյութեան կարճ ժամանակամիջոցին, միտրիմը յարողած է իր միջոցմիկով Առարագարի Հայտնեաց Վարժարան ողարկել Հալեյի երկարամնայ կրթական մշակմնրէն Կարապետ Կարիկեանի ղուտարը՝ Կուարդ, որ Ազգային Եկեղեցեան Վարժարանի շրջանուարտուիմներմ էր: Ան այս, երկու կողմերուն միջի ստորագրուած է հարմանայնագիր մը, ըստ որուն Խմանակատրօթիմը կը հոգար Օր. Կարիկեանի կրթարդակը, ղեպի Առարագար երթողարմի ու այլ ծախսերը, իսկ Կարիկեան յանձնատու կ'ըլլար իր ուսումնատրութեան տարիներուն րիտով պաշտունակարելու Հալեյի Ազգային Եկեղեցեան Վարժարանի աղջկանց բաժնին մէջ, վարժարանի հոգարարմութեան ճշդած ամարտակով: Եւ իրօք, յիշեալը երեք տարուայ ուսումնատրութեան շրջանը ամարտակ է ետք կը վերտղատնայ Հալեյ ու կը ծառայէ վարժարանին, շրջան մը ստանձնելով նաեւ ամոր ամօրէնուիի պատասխանատու պաշտունը:

Հալեյահայ միտրիմներուն մէջ ոչազատ երեւոյթ է «Արիբո» Պատանկեան Միտրեան գոյութիմը, հիմնուած մօտատրարպէս 1910ին, ի յիշատակ ազգային-ազատագրական պայքարի հերոս Մեղր Արիբոյ:

«Արիբո»ը, որ հալեյահայ առաջին պատանկեան միտրիմն էր, իր ոչ այնքան երկար կեանցի րմբացքին ծառայած է յայն գործմնեութիմն առտարար մշակութային եւ մարզական րմագատաններու ծիրէն ներս: Ունեցած է իր սեփական գրտարան-ընթերցատրանը, հրատարակած է հալեյահայ առաջին հայերէն քերթը *Արիբո* (ի ղեպ, 422իշեան մը արքիրի մը կոյս հիմնուելով ամոր հրատարակութեան րտականց ցարդ ծանօթ րտականէն (1913) երկու տարիով ետ տարած է), կազմակերպած է «Ողիմպիական» խաղեր, ստեղծած է ֆուրբոլի խումբ, որ քերես առաջինն էր րովանդակ Մտրիոյ տարածքին, հաստատած է զիշեյային վարժարան, տուած է քատերական ներկայացումներ, եւ. . . եւ. . .

Ու այսպես, իրար կը յայտընեն «Ազգային «Յոսուպ» Ընթերցատունը, «Անդամիկ Քատերախոմբը», «Կիլիկեան Ճահանայական Միութիւնը», «Հայ Երիտասարդաց Լուսազնախոմբը», Հայ Գրեւո Գիտի և Տարագրութեան յորեկնական համոյիտըրիմներու նկարագրութիւնը, և.մ., և.մ.:

Գիրքին նրկըրդը ըստինը՝ «Հայրենակցական Ընկերակցութիւններ» վերնագրուած, նուիրուած է հայկական տարրելու գաւառներէ Հայկ հաստատուած պանդոխտներու հայրենակցական հիմունքներով ստեղծած միութիւններուն: Այս ըրդը միութիւններն ալ ունեցած են ընդհանր մէկ յայտարար սաստարել հայրենի ըաղարքին կամ գիտին եկեղեցիին, հիմնել վարժարաններ կամ ըարեկարգել աղլուն իսկ գաղութն ունեցողները և օգնել անկար ու կարտ հայրենակիցներուն:

Հայրենակցան խմբադրումներու հիմամբ միութիւններ ունեցած են Արարկիւն ու իր գիւղերը՝ Շագը (Երկու միութիւն), Անցրոյին (Երեք միութիւն), Մաշկերտը (Երեք միութիւն) և Սարկան, Կիւրին ըաղարը, և վերջապէս Չմշկաժազի գիւղերը՝ իրենց ուր միութիւններով: Ընդամենը՝ 19 միութիւն:

Հայրենակցական միութիւններուն մէջ իր գործունէութեամբ ստատել ուշագրտ է 1863ին կիւրինցի վաճառականներու կազմած «Լահանեան Ընկերութիւն»ը, որ իր կէտարեայ գոյութեան ընթացքին կըցած է մեծապէս նպաստել Կիւրինի կրթական կեանքին: Ան իր հիմնադրութենէ կարճ ժամանակ ետը յայտուած է գոյացնել 500 օսմանեան ոսկիի պատկանելի դըսմագոլիս մը, որ անելի ետը ըարժրացած է 1991 ոսկիի: «Լահանեան»ը կըցած է տարիկան 60 օսմանեան ոսկիի: Ճապատ մը հասցնել Կիւրինի առնուազն հինգ վարժարաններուն, իր միջոցներով կատուցած է ըսանի մը նոր վարժարաններ, երբեմն Հալպէն գրկելով նոյնիսկ անոնց վարժարանները: Միութիւնը Կիւրինի վարժարաններուն ապագան ապահովելու համար հաստարար կաղուած մը գմած է Պարոմի մէջ և Երկու շէքը կատուցած Մամանի մէջ, ու անոնց տարեկան եկամտներով ապահոված է հայրենի վարժարաններուն ապագան: Հայրենակցական միւս խմբադրումները ընդհանրապէս ունեցած են գործունէութեան նեղ շրջանակ (անոնց մասին խօսող աղբիւրներն ալ ըստական ժլատ են ու անբարար): Հայրենի իրարանցիկը շրջանի միութիւնները ներայացնել տասջ, հեղինակը նախ հակիրճ գիծերով տուած է յիշեալ գիւղին կամ ըաղարքին անկիսի պատմութիւնը, ու յետոյ միայն անդրադարձած միութիւններու գործունէութեան:

Գիրքին վերջին՝ «Մասնաճիւղեր»ու ըստինի մէջ հեղինակը կը խօսի Եղեխայ և Պոլսոյ մէջ հիմնուած երկու տարրել միութիւններու սաստար համոյիտանայ համար Հայկի մէջ ստեղծուած անոնց մասնաճիւղերուն մասին: Ատանի հետարըրական է Սան Փաղոյի (Պրազի) մէջ 1912ին, նախկին հալպահայերու հիմնած միութեան գոյութիւնը, որ, ինչպէս հեղինակը կ'ըմբարդը, կազմուած էր ըարեկարգելական նպատակներով և Հայկի հայ գաղութին օգնելու առարարութեամբ:

Այլատու երեւոյք է որ միութիւններու գործունէութեան հիմնական նպատակներէն մէկը եղած է ներքական միջոցներ ապահովելը՝ կարենալ իրարար-

ծելու համար կրթական-մշակութային և բարձրագույն իրենց ծրագրվածը: Կային եկամտի ապահովման զանազան աղբյուրներ՝ անդամավճառ, ճեղքատուրքից, հասարակ ձեռնարկներ՝ քաղաքական ներկայացումներ (1911ին ներկայացում է Ենթակրի «Համ/Հոր»), մարզահանդեսներ, սինեմայի կամ այլ ձեռի հանդեսներ, հասարակ գումարներ շահագործում՝ տոկոսով կամ վաճառականական գործառնություններով, եւն: Պէտք է նշել որ, 1866ին հիմնում «Բերկոյ բարեխիւսաց ընկերութեան» անդամ արտրկիրցի վաճառականները իրենց միջեւ առեղծած էին տուրքի դրոշմին մը, ըստ որում արտածուած իրարանչիւր բնոյ դիմաց տուեալ վաճառականը միութեան գանձանակը կը մտծր մէկ դրոշ:

Հաւաքածայոց մշակութային այս ետուն կեանքը կանց կ'առնէ յանկարծ 1915ին: Վրայ կը հասնի Մեծ Եղեռնը ու մշակութային ետուն կեանքով ապտոլ Հայէպը կը դառնայ գլխաւոր քաղաքները արեւմտահայ գաղթականութեան:

1918ի զինադադարէն ետք կը հիմնուին նոր միութիւններ, մեծ մասամբ՝ հայրենակցական բնոյթի, որոնք կը շարունակեն հիմնելու գործը: Արժէ որ հայ բանասէր մը առանձին աստեմասիրութեան միջոց դարձնէ յետեղեռնեան շրջանի այս հարկերաւոր միութիւններուն գործունէութիւնը: Օրինակ, 1920ականներուն, միայն Խաչքերոյն ու իր շրջակայ զեղերը առանձինն ունեցած են 26 հայրենակցական մեծ ու վտար միութիւններ կամ խմբաւորումներ: Պատրաստուելիք այսպիսի հաստոր մը պիտի դրար գրախօսուող զիջքին անմիջական շարունակութիւնը եւ մանրանկարը Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ գաղթական հայութեան:

Որքան ծանօթ է մեզի, տակաւին հայեական ո՛չ մէկ գաղտնի կամ հայրենի ո՛ր մէկ քաղաքի մշակութային կազմակերպութիւններուն պատմութիւնը աստեմասիրութեան ու վերլուծութի առարկայ դարձած է այսքան խոր ու համապարփակ ձեւով: Հ. Երկրն Պօղոսեանի ետահատոր գործը, որքան ալ հետաքրքրական ու արժէքաւոր, չափազանց անփոփ է ու անոր կը պակսին վերլուծական բաժինն ու շարադրանքը, մանաւանդ որ իրարանչիւր միութիւն հոն կը ներկայացուի չափազանց սեղծ տողերով միայն:

Գրախօսուող զիջքը առաւել կ'արժեւորուի անոր համար որ հեղինակը առեւելագոյն չափով օգտագործած է Բերկոյ թիմի Ազգային Առաջնորդարանին հայրուստ արխիւը: Երբեմն անմշակ կարծումս արձանագրութիւն մը քուտարը եղած է յայտնաբերելու անծանօթ միութեան մը գոյութիւնը, կամ լոյս տիտելու շտապարանում գանազան հարցերու եւ երեւոյթիւնու վրայ:

Երբ կը խօսենք Բերկոյ թիմի Ազգային Առաջնորդարանի արխիւային միութեան մասին, հարցում մը ակամայ կը պարտադրէ ինքզինք. այս վաւերաբարդերը ինչպէ՞ս կրիւզած են Սիւրբեան Արքայապետի այլքն, ու ան ինչու՞ չէ՝ օգտագործած գանձը իր ստուգածուսալ աշխատութեան մէջ, որ երբեմն բազմաթիւ էջեր տրամադրած է ոչ այնքան կենսական միջբերու, եւ ընդարձակ մշտնջրուներ կատարած դիւանական տոմարներն ու միտերու ատեմագրութիւնները, մինչ փոխարկել, անտեսած է պատմութիւնը գաղտնի կրթական-մշակութային կեանքին մէջ այնքան մեծ դեր խաղցած բազմաթիւ միութիւններ:

րու, որոնցով պետք է գրել առնուազն «Ազգային Լեզուական Վարժարանի Երջանաարտից Միութեան» եւ «Հայտնեաց Մատենադարանի Խնամակալութեան» մասին:

Վիլքին ընթերցուող անգամ մը եւս կը համոզվ մեզ թէ որքա՛ն «ամբերուած գանձեր» կան տակալին մեր հին մամուլի էջերուն ու դիւանատուններու փառոս հաւաքածոններուն մէջ, եւ որոնք կը սպասեն գորգուրտ վերաբերմանքի եւ զիրենք յայտնաբերող ու լոյսին յանձնող նախնայներու:

Վիլքին լեզուն սանուն է ու անբերի եւ կը կարգաւորի մեծ հաճոյքով, եւ-տարբերական վէպի մը մեծան: Վտտահ ենք որ ան անմատնում առողջ պիտի մատակարարէր թողո՞ւ ամենք, որոնք վաղը պիտի գրեն ամբողջական պատմա-մաթիմից հայկական գաղթածակի մշակութային, կրթական, եկեղեցական, քառերական, երաժշտական, մարզական եւ տնտեսական կեանքին:

Եթէ ընդունինք որ հայկական կին գաղութին պատմութիւնը գեղեցիկ խնամակար մըն է, կազմուած գունատը յազմածն ու յազմագոյն տալիկները, ապա անոր եկեղեցական պատմութիւնը՝ առաջնորդական գաւազան ու կրօնական կեանք, ժուռ կէս դար առաջ թուրքին յանձնած էր արդէն Միլիթիան Սրբազանը: Վարդի Քշիշեանի գրախօսուող հատորով կ'ամբողջանայ խճանկարի եւ մէկ տալիկը՝ մշակութային-հասարակական կազմակերպութիւններու պատմութիւնը: Խճանկարին վրայ տակալին յոյճ կը մնան գաղութին կրթական կեանքին, զեղարտեստին, տնտեսական-վաճառականական անց-նալին, գրականութեան, կիլոատական արտեստին ու վերջապէս՝ հարուստ ա-րանքներ ունեցող զրուրեան դպրոցին յատուկ տալիկները:

Վիլքին երեք միջոցներ վրայ աշխատելու խտտուող լոկեայն տուած է արդէն հեղինակը՝ գրախօսուող հատորի վերջադրութեան իր կենսագրական անփոփ տուկերուն մէջ:

Կը յուսանք որ ամենք իրագործուող շ'ուշանար:

ՄԻՀՐԱՆ ՄՆԱԿԱՆԻՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հ. երկին Վրդ. Պողոսեան, Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Ա. հատոր՝ 1957, Բ. հատոր՝ 1963, Գ. հատոր՝ 1969, Վիեննա: